Պատմություն և մշակույթ 2025 № 22 (2)
History and Culture

https://doi.org/10.46991/hc.2025.22.2.047

Principles of Structural Functionalism in Political Genesis

Mariam Khanzadyan
https://orcid.org/0009-0005-5089-932X
Researcher at the Department of the Ancient Orient, Institute of Oriental Studies of the National Academy of Sciences of the Republic of Armenia
mkhanzadyan@orient.sci.am

Keywords: political genesis, structural functionalism, early states, lineages, segmented society.

Structural functionalism was one of the most influential sociological paradigms of the 20th century. At its core is the principle that political, economic, religious, and moral phenomena are functionally interconnected; that is, changes in one of these spheres inevitably lead to transformations in the others. Within this conceptual framework, the emergence of political structures is interpreted as a functional response to systemic needs: as society grows more complex, new mechanisms of regulation become necessary, resulting in the development of political institutions. While this approach made a substantial positive contribution to sociological theory, it was subsequently criticized, particularly for its inadequate explanation of processes of social change and its insufficient analysis of social conflict.

Կառուցվածքային ֆունկցիոնալիզմի դրույթները պետականության առաջացման մասին

Մարիամ Խանզադյան
ՀՀ ԳԱԱ արևելագիտության ինստիտուտի Հին Արևելքի բաժնի գիտաշխատող

Հիմնաբառեր՝ պետականաստեղծ գործընթացներ, կառուցվածքային ֆունկցիոնալիզմ, վաղ պետություններ, լինիջներ, հատվածավոր հասարակություն:

Կառուցվածքային ֆունկցիոնալիզմը XX դարի սոցիոլոգիական ամենակարևոր ուղղություններից էր: Նրա հիմքում այն դրույթն է, որ քաղաքական, տնտեսական, կրոնական ու բարոյական երևույթների միջև գոյություն ունի ֆունկցիոնալ կապ, իմա՝ փոփոխությունները վերոհիշյալ ոլորտներից որևէ մեկում հանգեցնում են փոփոխությունների մյուս ոլորտներում: Այս

History and Culture Vol.-22(2), 2025, pp. 47-56
Received: 15.09.2025
Revised: 16.10.2025
Accepted: 24.11.2025

This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial 4.0 International License.

© The Author(s) 2025

Principles of Structural Functionalism in Political Genesis

Կառուցվածքային ֆունկցիոնալիզմի դրույթները պետականության առաջացման մասին

հայեցակարգի շրջանակում քաղաքական կառուցվածքների առաջացումը դիտարկվում է որպես ֆունկցիոնալ պատասխան համակարգի պահանջներին. հասարակությունը բարդանում է. պահանջվում են կարգավորման նոր մեխանիզմներ և, որպես հետևանք, առաջանում են քաղաքական կառույցները: Այս ուղղությունը մեծ դրական ներդրում ունեցավ, սակայն հետագայում քննադատվեց մասնավորապես սոցիալական փոփոխությունների գործընթացների ոչ լիարժեք մեկնաբանման ու սոցիալական կոնֆլիկտը պատշաճորեն չվերլուծելու համար:

Политогенетические положения структурного функционализма

Мариам Ханзадян

Научный сотрудник отдела Древнего Востока Института востоковедения Национальной академии наук Республики Армения

Ключевые слова: государствообразующие процессы, структурный функционализм, ранние государства, линиджи, сегментарное общество.

Структурный функционализм был одним из важнейших социологических направлений XX века. В его основе лежит положение о том, что между политическими, экономическими, религиозными и моральными явлениями существует функциональная связь; иначе говоря, изменения в одной из этих сфер приводят к изменениям в других. В рамках этой концепции возникновение политических структур рассматривается как функциональный ответ на потребности системы: по мере усложнения общества возникают новые механизмы регулирования, что, в свою очередь, ведет к формированию политических структур. Это направление внесло значительный вклад в социологическую теорию, однако впоследствии подверглось критике, прежде всего за недостаточное объяснение процессов социального изменения и неспособность адекватно проанализировать социальные конфликты.

* * *

Ներածություն: XX դարում արևմտյան գիտության մեջ ձևավորվեց ևս մեկ ուղղություն, որն անվանում են **ստրուկտուրալ կամ կառուցվածքային ֆունկցիոնալիզմ**: Ռոբերտ Նիսբետն այն համարում է XX դարի սոցիալական գիտությունների ամենանշանակալից տեսությունը [Ритцер 2002, 114.]: Սույն հոդվածի շրջանակում կփորձենք վերհանել ու առանձնացնել կառուցվածքային ֆունկցիոնալիզմի դրույթները պետականության առաջացման վերաբերյալ:

Կառուցվածքային ֆունկցիոնալիզմը: Կառուցվածքային ֆունկցիոնալիզմի հիմքում բրիտանական սոցիոլոգիական մարդաբանության դպրոցն է, որը ձևավորվեց առաջին սոցիոլոգների՝ Օ. Կոնտի, Հ. Սպենսերի, Է. Դյուրկհեյմի, ապա՝ Բ. Մալինովսկու, Ա. Ռեդքլիֆ-Բրաունի, Է. Էվանս Պրիչարդի ուսումնասիրությունների արդյունքում: Հիմքում այն դրույթն է, որ քաղաքական, տնտեսական, կրոնական ու բարոյական երևույթների միջև գոյություն ունի ֆունկցիոնալ կապ, իմա՝ փոփոխությունները վերոհիշյալ ոլորտներից որևէ մեկում հանգեցնում են փոփոխությունների մյուս ոլորտներում:

Բուն ֆունկցիոնալիզմի փուլի սկիզբը 1922 թվականն էր, երբ միաժամանակ լույս տեսան Ա. Ռեդքլիֆ-Բրաունի ու Բ. Մալինովսկու մենագրությունները, համապատասխանաբար՝ «Անդամանյան կղզու բնակիչները» (***«The Andaman islanders; a study in social anthropology»***) և «Խաղաղ օվկիանոսի արևմտյան մասի արգոնավորդները» (***«Argonauts of the Western Pacific»***)՝ հիմքը դնելով կառուցվածքային ֆունկցիոնալիզմի երկու հիմնական դպրոցների: Հենց Բ. Մալինովսկին է առաջինը առաջարկել «ֆունկցիոնալիզմ» եզրույթը, իսկ Ա. Ռեդքլիֆ-Բրաունի դերը մեծ է եղել «կառուցվածքային ֆունկցիոնալիզմ» հասկացության տարածման գործում [Боглинд 1992, 42]: Կառուցվածքային ֆունկցիոնալիզմը կարևորեց դաշտային ուսումնասիրությունները և տեսաբանների ու գործնական ուսումնասիրություններ իրականացնող մասնագետների համակարգված ու ընդհանուր աշխատանքը: Ուսումնասիրությունների հիմնական հարթակներ դարձան արևմտյան երկրների ներկա ու նախկին գաղութները, ինչը կանխորոշեց բրիտանական ու ամերիկյան ուսումնասիրությունների ուղղությունները. այսպես՝ բրիտանական դպրոցն ավելի մեծ ուշադրություն հատկացնում էր Աֆրիկային ու Հնդկաստանին, մինչդեռ ամերիկյան դպրոցի կիզակետում ամերիկյան հնդկացիական հանրույթներն էին, ավստրալիականի՝ Ավստրալիայի, Օվկիանիայի ու Պոլինեզիայի բնիկները [Keen 2013, 821]: Ֆունկցիոնալիզմը ժամանակավորապես դուրս մղեց էվոլյուցիոնիզմը, չնայած թե՛ Ա. Ռեդքլիֆ-Բրաունը, թե՛ Բ. Մալինովսկին ըստ արժանվույն գնահատում էին թե՛ էվոլյուցիոն, թե՛ դիֆուզիոն դպրոցների ներդրումները [Малиновский 1941/2005, 25-26. Radcliffe-Brown 1923]: Նրանք ընդամենը քննադատաբար էին վերաբերում մարդկության պատմության ընթացքում, մանավանդ վաղ փուլերում հասարակության ու մշակույթի էվոլյուցիայի վերաբերյալ հավաստի ու համակարգված տեղեկություններ ունենալու հնարավորությանը [Никишенков 2008,199]: Մինչև 1930-ական թթ. Ա. Ռեդքլիֆ-Բրաունն ու Բ. Մալինոսկին հանդես էին գալիս տեսական նույն դիրքերից, սակայն 1930-ական թթ. վերջում իրավիճակը փոխվեց. Բ. Մալինովսկին ավելի էր հակվում մշակույթի մեկնաբանմանը կենսաբանական դետերմինիզմի (բիոլոգիզմի) ու պսիխոլոգիզմի դիրքերից՝ քննադատելով սոցիոլոգիզմը, ինչը պաշտպանում էր Ա. Ռեդքլիֆ-Բրաունը [Никишенков 2008, 191]: Արդյունքում Ա.Ռեդքլիֆ-Բրաունը սկսեց դեմ արտահայտվել իրեն ու Բ. Մալինովսկուն մեկ ընդհանուր՝ ֆունկցիոնալիստական դպրոցի մեջ ներառելուն [Рэдклифф Браун 2001, 211]:

Ֆունկցիոնալիզմը կարելի է բնորոշել որպես բարդ, համակարգայնորեն կազմակերպված օբյեկտների ուսումնասիրման մեթոդաբանական մոտեցում. այդ օբյեկտները ընկալվում են որպես ամբողջություններ, որոնց տարրերը կատարում են որոշակի փոխհամաձայնեցված գործառույթներ, և այդ գործառույթների իմաստը որոշվում է միայն ամբողջ համակարգի կոնտեքստում [Порус 2006, 6]: Ռ. Նիսբետի կարծիքով փոփոխությունների դասական էվոլյուցիոն տեսության կենտրոնական նախադրյալները՝ ներունակությունը (իմանենտությունը), գենետիկ անընդհատությունը, տարբերակումը (դիֆերենցիացիան), ուղղվածությունն ու ունիֆորմիտարիզմը (դանդաղ ու մշտական ձևափոխումները), կարևոր տեղ են գրավում նաև ֆունկցիոնալ տեսության մեջ [Nisbet 1969, 235-236]: Սակայն նրանց հիմնական տարբերությունն էվոլյուցիոնիստներից այն է, որ ֆունկցիոնալիստները առաջ են քաշում սոցիալական համակարգերում տեղ գտած ու փոփոխություններ առաջացնող որոշակի բնական աղբյուրների գործոնը՝ համարելով, որ այդ փոփոխությունները համարժեք են կենդանի օրգանիզմի աճին [Ibid]:

Principles of Structural Functionalism in Political Genesis

Կառուցվածքային ֆունկցիոնալիզմի դրույթները պետականության առաջացման մասին

Ըստ ֆունկցիոնալիզմի՝ վերոհիշյալ փոփոխությունները կամ սոցիալական ինստիտուտների աստիճանական փոխակերպումները ***(ի թիվս որոց՝ պետականության առաջացումը)*** պայմանավորված են առաջին հերթին այդ ինստիտուտների՝ փոփոխված ֆիզիկական ու սոցիալական պայմաններին հարմարվելու անհրաժեշտությամբ: Նման ադապտացիայի արդյունքում տեղի է ունենում այդ ինստիտուտների տարբերակում (դիֆերենցիացիա), նրանց գործառույթների կատարելագործում, և, որպես հետևանք, բարդանում է ամբողջ սոցիալական համակարգը [Порус 2006, 9]:

Ըստ էության գիտության մեջ տեղի ունեցավ հարացույցների փոփոխություն. էվոլյուցիոն մարդաբանության դիախրոն պրոբլեմատիկան տեղը զիջեց հասարակական ինստիտուտների սինխրոն գործելու ուսումնասիրման խնդիրներին [Никишенков 2008, 175]: Սոցիալական լայնածավալ կառուցվածքներն ու հասարակական ինստիտուտները, նրանց փոխհարաբերություններն ու մարդկանց հանդեպ կիրառվող սահմանափակումները կառուցվածքային ֆունկցիոնալիզմի դպրոցի ուսումնասիրման հիմնախնդիրներն են [Ритцер 2002, 114-115]:

Ավելի մանրամասն ներկայացնենք պետականության առաջացման դրույթները Ա.Ռեդքլիֆ-Բրաունի, Բ. Մալինովսկու ու Է. Էվանս-Պրիչարդի աշխատություններում:

Ա.Ռեդքլիֆ-Բրաունի ֆունկցիոնալիզմը

Ալֆրեդ Ռեդքլիֆ-Բրաունը (1881-1955) բրիտանացի հայտնի մարդաբան ու ազգագրագետ էր, որն ուսումնասիրել է Անդամանյան կղզիների ու Արևմտյան Ավստրալիայի բնիկներին: Նրա կարծիքով սոցիալական կառուցվածքն անհրաժեշտ է դիտարկել որպես հաստատուն վիճակ, որն այդպիսին է մնում միայն մշտական նորացումների շնորհիվ, ինչպես կենդանի օրգանիզմի քիմիա-ֆիզիոլոգիական հոմեոստազը, հաստատունությունը խախտող իրադարձությունները առաջացնում են սոցիալական ռեակցիա ու համակարգի փոխակերպում, ինչի արդյունքում ձեռք է բերվում նոր հաստատունություն, որը տարբերվում է նախորդից [Radcliffe-Brown 1940, XXIII]:

Ա. Ռեդքլիֆ-Բրաունը չէր մերժում, որ պատմության ընթացքում գոյություն ունեցող մարդկային հասարակությունները դիախրոնիկ ասպեկտով պետք է ունենան ունիվերսալ գծեր, բայց դրանք հայտնաբերելու համար նա անհրաժեշտ էր համարում ուսումնասիրել այդ հասարակությունների տիպաբանությունը, ոչ թե համեմատական կարգով դասավորել դրանք՝ խտրականություն ցուցաբերելով: Միայն տիպաբանական հարցերը լուծելուց հետո կարելի է այդ հասարակությունները դասակարգել և իրականությանը համապատասխան բնորոշումներ գործածել, ոչ թե կիրառել տարածված «նախնադարյան հասարակարգ», «ֆեոդալական հասարակարգ» ու այլ բնորոշումները [Radcliffe-Brown 1940, XI-XII. Radcliffe-Brown 1964, 75]:

Մարդկային հասարակության ու սոցիալական կյանքի համակարգված ուսումնասիրության ընթացքում ի հատ է գալիս խնդիրների երեք համալիր՝ 1) ի՞նչ տեսակի սոցիալական կառուցվածքներ կան, ինչպե՞ս դրանք դասակարգել, 2) ինչպե՞ս են գործում այդ սոցիալական կառուցվածքները, 3) ինչպե՞ս են ձևավորվում սոցիալական նոր կառուցվածքները [Рэдклифф-Браун 2001, 210-211]:

Ուսումնասիրման համար նպատակահարմար սոցիալական համակարգը, ըստ Ա Ռեդքլիֆ-Բրաունի, այն համակարգն է, որը տարածական սահմանափակվածություն ունի և ոչ

միայն հստակորեն անջատված է մյուս խմբերից, այլև իր ներսում անհատների վարքի ասպեկտների մեծամասնությունում միատարր է [Radcliffe-Brown 1964, 60]:

Սոցիալական համակարգում գոյություն ունի դինամիկ ժառանգորդություն, որի դեպքում կառուցվածքը պահպանում է իր կառուցվածքային ձևը ժամանակի որոշակի ընթացքում [Radcliffe-Brown 1964, 80]: Սոցիալական համակարգի կառուցվածքային ձևի պահպանումը հավասար է հասարակության պահպանմանը [Radcliffe-Brown 1964, 84]: Կառուցվածքային ձևը փոխվում է սոցիալական համակարգի ներքին զարգացման կամ արտաքին ազդեցության առաջացրած խախտումների արդյունքում: Խախտումների որոշակի մակարդակի դեպքում հասարակությունը սոցիալական կառուցվածքի մի տեսակից անցնում է մյուսին [Radcliffe-Brown 1964, 87]:

Պետություն հասկացությունը, ըստ Ա. Ռեդքլիֆ-Բրաունի, ներկայացվում է որպես հասարակությունը կազմող մարդկանցից վեր կանգնած ինչ-որ էություն, որն ունի «ինքնիշխանություն» ու օրենքներ: Երևութական աշխարհում նման բան չկա. վերոհիշյալ իմաստով պետությունը փիլիսոփաների ֆիկցիա է [Radcliffe-Brown 1940, XXIII]: Նմանապես, ըստ Ա. Ռեդքլիֆ-Բրաունի, պետք չէ մեծ նշանակություն տալ *«ինքնիշխան պետություն»* հասկացությանը. պետությունները ընդամենը տարածքային խմբեր են մեկ ուրիշ՝ առավել խոշոր քաղաքական համակարգի շրջանակում, և այդ համակարգում նրանց հարաբերությունները որոշվում են պատերազմով կամ պատերազմի հավանականությամբ, պայմանագրերով ու միջազգային իրավունքով: Քաղաքական տեսությունն ու քաղաքական պրակտիկան շատ են տուժել նրանից, որ ինքնիշխանության դրույթը գիտակցորեն կամ անգիտակցորեն հաստատվել է որպես նորմա [Radcliffe-Brown 1940, XXI]:

Իսկ ի՞նչ գոյություն ունի «պետություն» հասկացության փոխարեն: Ա. Ռեդքլիֆ-Բրաունի կարծիքով գոյություն ունի կազմակերպություն՝ հարաբերությունների բարդ համակարգով փոխկապված առանձին մարդկանց ամբողջություն, որի շրջանակում մարդիկ տարբեր դերեր են տանում. ոմանք հատուկ իշխանություն կամ հեղինակություն ունեն և այլն: Գոյություն չունի այդ կազմակերպությունից վեր գտնվող պետություն կամ իշխանություն. կա առանձին մարդկանց իշխանություն: Հասարակության քաղաքական կազմակերպությունը ընդհանուր կազմակերպության ասպեկտն է, որը պայմանավորված է ֆիզիկական ուժի վերահսկողությամբ ու կարգավորմամբ [Radcliffe-Brown 1940, XXIII]:

Բրոնիսլավ Մալինովսկի. ինտեգրման ունիվերսալ սկզբունքներ

Ֆունկցիոնալիստական դպրոցի մյուս ականավոր ներկայացուցիչ Բրոնիսլավ Մալինովսկին (1884-1942) իր տեսական աշխատություններում «ֆունկցիա» հասկացությունը կապում էր սոցիալական «կարիքների» ունիվերսալ ամբողջության հետ: Ֆունկցիան, ըստ Մալինովսկու, այս կամ այն մշակութային կազմավորման առանձնահատուկ հասարակական կարիքին համապատասխանելու ունակությունն է: Մարդկային կազմավորման միավորները նա անվանում էր ինստիտուտներ: Հասարակության վերլուծությունը, ըստ այդմ, անհրաժեշտ է իրականացնել միաժամանակ երկու հարթություններում՝ ֆունկցիոնալ ու ինստիտուցիոնալ [Решетников, Решетникова 2011, 98]:

Ըստ Մալինովսկու՝ գոյություն ունեն ինտեգրման ունիվերսալ սկզբունքներ ու այդ սկզբունքների վրա հիմնված ինստիտուտներ: Օրինակ՝ առաջին սկզբունքը տոհմի շարունակության սկզբունքն է, որի հիման վրա ձևավորվել են ընտանիքի, արյունակցական

բարեկամության, ամուսնության ու այլ ինստիտուտները: Այս սկզբունքին հաջորդում են տարածքային սկզբունքը (թափառող խմբի, գյուղի, գյուղերի միավորման և այլ ինստիտուտներ), ֆիզիոլոգիական սկզբունքը (սեռական խմբեր, կազմակերպություններ, դասեր և այլն), կամավոր հետաքրքրության սկզբունքը (զաղտնի կազմակերպություններ, ստեղծագործական միություններ), աշխատանքային ու մասնագիտական շահերի սկզբունքը (կախարդներ, շամաններ, քրմեր, արհեստավորների և տնտեսական այլ խմբեր), սոցիալական աստիճանակարգության սկզբունքը (դասեր, կաստային համակարգ, էթնիկ, ռասայական ու մշակութային տարբերությունների վրա հիմնված շերտավորում (ստրատիֆիկացիա) [Малиновский 1941/2005, 60]: Ահա ինտեգրացիայի վերջին աստիճանը՝ մշակույթի կամ քաղաքական իշխանության օգնությամբ ընթացող ինտեգրացիան, ենթադրում է ***քաղաքական միավոր***, որը կարող է ներառել ցեղի մի մասը կամ ցեղն ամբողջությամբ կամ էլ ենթախմբեր՝ մշակութային տարբերություններով [Малиновский 1941/2005, 61]:

Ըստ Բ. Մալինովսկու՝ իշխանությունն առհասարակ սոցիալական կազմակերպության էությունն է, առանց իշխանության չի կարող գոյատևել ոչ մի ինստիտուտ, բայց կան ինստիտուտներ, որոնք կազմակերպված են իշխանության գործուն կիրառման համար: Այս սկզբունքն ավելի ակնհայտ է դառնում ռազմական կազմակերպությունների զարգացման, հարձակման ու պաշտպանության համար նրանց կիրառման դեպքում [Малиновский 1941/2005, 59]: Նա նաև տարանջատում է ցեղը՝ որպես մշակութային միավոր, այն ցեղից, որն արդեն հանդես է գալիս որպես քաղաքական կազմակերպության՝ անհրաժեշտ համարելով այդ երկու կարգավիճակների տարբերությունների կամ նմանությունների վերհանումը [Малиновский 1941/2005, 61]:

Այս դրույթներին համալրելու են գալիս Մալինովսկու ինտեգրատիվ իմպերատիվների (Integrative Imperatives) դրույթները: Մարդկային մշակույթներում, ըստ Մալինովսկու, գոյություն ունեն ածանցավոր կարիքներ (Derived Needs): Մշակույթի զարգացումը մարդուն ընձեռում է լրացուցիչ հնարավորություններ, ունակություններ ու ուժեր, ինչը հանգեցնում է մարդու գործունեության ոլորտի զգալի ընդարձակման: Այդ ընդարձակումը գերազանցում է մարդու բնական կարողությունները և միևնույն ժամանակ մարդու վարքը դնում է որոշակի շրջանակներում՝ առաջացնելով դետերմինիզմի յուրահատուկ տեսակ [Малиновский 1941/2005, 101]:

Այդ ածանցավոր կարիքները Մալինովսկին անվանում է մշակութային իմպերատիվներ, որոնք կապված են մարդու՝ սեփական անվտանգության ու հարմարության սահմանները ընդլայնելու ձգտման հետ: Յուրաքանչյուր իմպերատիվին մարդը տալիս է որոշակի մշակութային պատասխան՝ ձևավորելով իր մշակույթին համապատասխան նորմերի մի համակարգ, որոնց հետևելը նույնքան բացարձակ նշանակություն ունի, որքան կենսաբանական դետերմինանտներին ենթարկվելը, քանի որ մարդու կախվածությունը մշակութային ապարատից նրա կենսագործունեության անհրաժեշտ պայմանն է [Малиновский 1941/2005, 104]:

Մալինովսկին առանձնացնում է չորս իմպերատիվներ՝ համապատասխան չորս պատասխաններով:

1. Նյութական հագեցվածության ու սպառողական ապրանքների մշակութային ապարատը պետք է արտադրվի, օգտագործվի, փոխարինվի նոր ապրանքներով: Մշակութային պատասխանը տնտեսությունն է:

2. Մարդու վարքը պետք է կոդիֆիկացվի և կարգավորվի տեխնիկական, իրավական ու բարոյական կարգադրություններով: Մշակութային պատասխանը սոցիալական վերահսկողությունն է:

3. Մարդկային ռեսուրսը (տեքստում՝ человеческий материал) պետք է նորացվի, դաստիարակվի և կրթվի՝ ցեղային ավանդույթին լիարժեք տիրապետելով: Մշակութային պատասխանը կրթությունն է:

4. Եվ, ի վերջո, յուրաքանչյուր ինստիտուտ պետք է ունենա ղեկավարություն, որն ունենա իշխանություն և տիրապետի միջոցների, որոնցով բռնի ուժով իրականացնել տա իր կարգադրությունները: **Մշակութային պատասխանը քաղաքական կազմակերպությունն է՝ պետությունը** [Малиновский 1941/2005, 107]: Ընդ որում՝ ուղիղ բռնությունը սահմանափակվում է և աստիճանաբար փոխարինվում լռակյաց համաձայնությամբ, եթե այն սահմանափակ է և արդարացված, կամ, ընդհակառակը, փոխակերպվում է բռնապետության ու իշխանության չարաշահման: Կարևոր է նաև տվյալ խմբի վերաբերմունքն այլ խմբերի հանդեպ, որոնց հետ նա կարող է կամ խաղաղ գոյակցել կամ գտնվել պատերազմական հարաբերությունների մեջ [Малиновский 1941/2005, 111]:

Է. Էվանս-Պրիչարդը և քաղաքական մարդաբանությունը: Է. Էվանս-Պրիչարդը (1902-1973) բրիտանական մարդաբան ու աֆրիկագետ էր, քաղաքական մարդաբանության հիմնադիրը, աֆրիկյան ազանդե ու նուեր ցեղերի շրջանում երկարատև ուսումնասիրություններ անցկացրած պատմաբան-ազգագրագետ: 1937 թ. նա հրատարակվեց «Կախարդությունը, մարգարեներն ու մոգությունը ազանդաների շրջանում» (Witchcraft, Oracles, and Magic Among the Azande), իսկ 1940 թ.՝ «Նուերները» դասական աշխատությունները: Նույն թվականին Մեյեր Ֆորթսի հետ համատեղ նա խմբագրեց և հրատարակության պատրաստեց «Աֆրիկյան քաղաքական համակարգեր» ժողովածուն, որն արմատապես փոխեց քաղաքական համակարգերի համեմատական ուսումնասիրության մեթոդաբանությունը և դրեց քաղաքական մարդաբանության հիմքը: Է. Էվանս-Պրիչարդը նաև գիտության մեջ մտցրեց սեգմենտավոր (հատվածավոր) հասարակությունների ու լինիջների հասկացությունները, ինչի մասին՝ ստորև:

Է. Էվանս-Պրիչարդն ու Մ. Ֆորթսը Ֆ. Բոասի ու Ա. Ռեդքլիֆ-Բրաունի պես առաջարկում են համեմատական վերլուծություններ անցկացնել ոչ թե աշխարհագրական տարբեր շրջանների ու քաղաքական տիպերին պատկանող հասարակությունների, այլ այն հասարակությունների միջև, որոնք դրսևորում են քաղաքական համակարգերի նման բնութագիրներ, միայն այդ դեպքում կարելի է հիմնավորված գիտական ընդհանրացումներ անել [Evans-Pritchard & Fortes 1940, 3, 5]:

Պետության առաջացման պատճառներից ըստ արժանվույն դեր հատկացնելով ռազմական՝ նվաճման գործոնին՝ Է. Էվանս-Պրիչարդն ու Մ. Ֆորթսը կարևորեցին մշակութային նմանություններ ունեցող ցեղերի՝ նույն մշակութային հարթության մեջ գտնվելու ու քիչ տարբերվող տնտեսական տարբերակում ունենալու գործոնները, որոնց դեպքում «*ցեղերը կարող են ցուցաբերել քաղաքական մեկ կառույցի մեջ միավորվելու միտում՝ առանց դասակարգային կամ կաստայական հատվածավորում առաջացնելու*» [Evans-Pritchard & Fortes 1940, 10]:

Սեգմենտավոր հասարակություն: Նուերների քաղաքական համակարգը նկարագրելիս Է. Էվանս-Պրիչարդն առաջարկում էր *«հատվածավոր (սեգմենտավոր) հասարակություն* (եզրույթի հեղինակն է Է. Դյուրկհեյմը, ըստ նրա՝ այդպիսին է այն հասարակությունը, որի քիչ թե շատ հավասար հատվածների տրոհման հիմքում տարածական սկզբունքն է, սեգմենտային կառուցվածքը հաջորդում է ընտանեկանին և նախորդում մասնագիտական բաժանմամբ կառուցվածքին [Дюркгейм 1996, 193-195]) արտահայտությունը: Սեգմենտավոր հասարակությունը ունի 1) տարածական որոշակի բաշխվածություն իր սոցիոտարածական միավորներով ու համակարգով, 2) ցեղի սեգմենտը քաղաքական խումբ է նման այլ սեգմենտների հանդեպ, և նրանք միասին ցեղ են կազմում միայն նույն քաղաքական համակարգի մաս հանդիսացող նուերների այլ ցեղերի ու հարակից օտար ցեղերի վերաբերմամբ: ***Քաղաքական արժեքները հարաբերական են, քաղաքական համակարգը հավասարակշռությունն է տրոհման ու միավորման հակադիր միտումների միջև***, իմա՝ բոլոր խմբերը ձգտում են բաժանվել սեգմենտների, միևնույն ժամանակ բոլոր սեգմենտները ձգտում են միավորվել նման սեգմենտների հետ: Այս համակարգը որոշ չափով պայմանավորված է էկոլոգիայով (հեղինակի մոտ՝ շրջակա միջավայրը, կենսապահովման ձևը, կոմունիկացիաների աղքատությունը, պրիմիտիվ տեխնոլոգիաները և այլն), բայց սեգմենտացիայի միտումը նուերների սոցիալական կառուցվածքի հիմնարար սկզբունքն է [Эванс-Причард 1985, 132-133]:

Քաղաքական արժեքները մշտական կոնֆլիկտի մեջ են. մի կողմից նրանք կապում են մարդուն իր խմբին, մյուս կողմից՝ իր սեգմենտը գտնվում է մյուս սեգմենտների հանդեպ հակադրության մեջ: Որոշիչը սոցիալական իրավիճակն է, որում մարդը հայտնվում է [Эванс-Причард 1985, 123]:

Լինիջներ: Նուերների ցեղային կառուցվածքը նկարագրելիս Է. Էվանս-Պրիչարդը տալիս է կլանի, լինիջի ու ազգակցության բնորոշումները: Կլանը ազնատների ամենախոշոր խումբն է, որը ծագում է մեկ ընդհանուր նախնուց: Լինիջը կլանի ծագումնաբանական սեգմենտն է (սովորաբար սահմանափակվում է 3-4 սերնդով), կլանը, ըստ էության, լինիջների համակարգ է [Эванс-Причард 1985: 169]: Քաղաքական ու լինիջային խմբերը նույնական չեն, չնայած որոշ առումներով համընկնում են և հաճախ ունեն նույն անվանումները [Эванс-Причард 1985, 171]: Լինիջները կորպորատիվ լոկալ համայնքներ չեն, չնայած հաճախ համընկնում են տարածքային միավորների հետ: Նուերների ցանկացած գյուղ կապված է այս կամ այն լինիջի հետ, և չնայած լինիջի անդամները կարող են գյուղի բնակչության աննշան մասը կազմել, համայնքը, այդուհանդերձ, իրեն նույնականացնում է լինիջի հետ: Բայց երբ խոսքը էկզոգամիայի օրենքների ու ծիսական որոշ գործողությունների ու սպանության համար պատասխանատվության մասին է, լինիջները հանդես է գալիս որպես լրիվ ինքնավար խմբեր [Эванс-Причард 1985, 176-177]:

Խորհրդային ու հետխորհրդային մասնագիտական գրականության մեջ լինիջին զուգահեռ կիրառվում է «տոհմ» եզրույթը, որի կառուցվածքաստեղծ սկզբունքները նույնն են՝ էկզոգամիա, ազգակցության միագիծ դիտարկում, միասնականության խորհրդանիշներ [Попов 2020, 231]: Ըստ այդմ՝ որպես մինիմալ լինիջի զուգահեռ հանդես է գալիս պատրոնիմիան [Коротаев, Оболенков 1989] (հայերենում՝ ազգը որպես գերդաստանի ճյուղավորման հետևանքով կազմավորված արյունակից ընտանիքների խումբ):

Մեթոդաբանական առումով Է. Էվանս-Պրիչարդի մոտեցումը մի քայլ առաջ էր Բ. Մալինովսկու ու Ա. Ռեդքլիֆ-Բրաունի աշխատություններից: Նուերների տարածքային ու ծագումնաբանական կազմավորումները նկարագրելիս նա չսահմանափակվեց զուտ կառուցվածքային սկզբունքների թվարկմամբ, այլ շեշտադրեց այդ կազմավորումների առաջացման տնտեսական ու ժողովրդագրական պատճառները [Никишенков 2008, 304]: Մյուս կողմից՝ «լինիջների պարադիգմը» հետազոտողների համար դարձավ նախագաղութային հասարակությունների ուսումնասիրման գործիք, քանի որ նման հասարակությունների սոցիալական ու քաղաքական կազմակերպման (մանավանդ Աֆրիկայում) հիմքում ոչ թե կենտրոնացված պետականությունն է, այլ վերոհիշյալ ազգակցային համակարգերը:

Եզրակացություն: Կառուցվածքային ֆունկցիոնալիզմը գերակայող էր արևմտյան գիտության մեջ 1930-1950-ական թթ.: Ռոբերտ Նիսբետի կարծիքով ֆունկցիոնալիզմի հիմնական ու գլխավոր նպատակն էր դուրս բերել փոփոխությունների դրդապատճառային մեխանիզմները այն նույն պայմաններից, որոնցից դուրս են բերվում սոցիալական կարգի հայեցակարգերը [Nisbet 1969, 228]: Բ. Մալինովսկին ստեղծեց մի ամբողջ դպրոց՝ ամենամյա գիտական սեմինարներով, նրա աշակերտները և հետևորդները ձևավորեցին ֆունկցիոնալիզմի երկրորդ ալիքը: Ոչ ֆորմալ դպրոց ստեղծեցին նաև Ա. Ռեդքլիֆ-Բրաունի հետևորդները: Սակայն արդեն 1960-ական թթ. կառուցվածքային ֆունկցիոնալիզմը աստիճանաբար սկսեց զիջել իր դիրքերը: Տվյալ ուղղությունը քննադատվել է մասնավորապես սոցիալական փոփոխությունների գործընթացների ոչ լիարժեք մեկնաբանման ու սոցիալական կոնֆլիկտը պատշաճորեն չվերլուծելու համար [Ритцер 2002, 136-142], ինչպես նաև հասարակության բազմամակարդակ հակասությունները հաշվի չառնելու համար: Լինիջների պարադիգմի դեպքում շեշտադրվել էր ծագումնաբանությունը, սակայն հետին պլան էին մղվել տնտեսական ու գաղափարախոսական գործոնները: Կոնֆլիկտների թերագնահատման միտումը նույնպես պահանջում էր վերանայում ու հաստատուն ապացույցներ [Боглинд 1992, 43]:

References

Боглинд А. Структурализм и функционализм // Современная западная социология: теории, традиции, перспективы / под ред. П. Монсона. – СПб.: Изд-во «Нотабене», 1992. – С. 31–70.

Дюркгейм Э. О разделении общественного труда / пер. с фр. А. Б. Гофмана; прим. В. В. Сапова. – М.: Изд-во «Канон», 1996. – 432 с.

Иванов Д. В. Парадигмы в социологии. – Омск: Изд-во ОмГУ, 2005. – 72 с.

Коротаев А. В., Оболенков А. А. Родовая организация в социально-экономической структуре классовых обществ // Советская этнография. – 1989. – № 2. – С. 36–45. – URL: https://www.booksite.ru/etnogr/1989/1989_2.pdf.

Малиновский Б. Научная теория культуры // Малиновский Б. Научная теория культуры [сб.]. – М.: ОГИ, 2005. – С. 15–122.

Никишенков А. А. История британской социальной антропологии. – СПб.: Изд-во Санкт-Петербургского университета, 2008. – 496 с.

Попов В. А. Концепты «род» и «родовая организация»: опыт переосмысления дефиниций // Сибирские исторические исследования. – 2020. – № 3. – С. 230–242. – URL: https://cyberleninka.ru/article/n/kontsepty-rod-i-rodovaya-organizatsiya-opyt-pereosmysleniya-definitsiy.
Порус В. Н. Функционализм: методологическая программа или философская парадигма // Эпистемология & философия науки. – 2006. – Т. VIII, № 2. – URL: https://cyberleninka.ru/article/n/funktsionalizm-metodologicheskaya-programma-ili-filosofskaya-paradigma.
Решетников С. В., Решетникова Т. С. Становление методологии функционального подхода в политической науке // Веснік Брэсцкага універсітэта. Серыя 1. Філасофія. Паліталогія. Сацыялогія. – 2011. – № 1. – С. 98–105. – URL: https://rep.brsu.by/bitstream/handle/123456789/855/1_2011_98-105.pdf?sequence=1&isAllowed=y.
Ритцер Дж. Современные социологические теории. – СПб.: Питер, 2002. – 688 с. – URL: https://fb2.top/sovremennye-sociologicheskie-teorii-565405.
Рэдклифф-Браун А. Р. Структура и функция в примитивном обществе. – Москва: Изд. фирма «Восточная литература» РАН, 2001. – 304 с.
Эванс-Причард Э. Э. Нуэры. Описание способов жизнеобеспечения и политических институтов одного из нилотских народов. – Москва: Главная редакция восточной литературы изд-ва «Наука», 1985. – 236 с.
Evans-Pritchard E. E. & Fortes M. 1940, Introduction, in: African political systems (Edited by M. Fortes and E. E. Evans-Pritchard), Published for the International African Institute by the Oxford University Press, London, 1940, pp. 1-24.
Evans-Pritchard E. E. 1940, The Nuer of the Southern Sudan, in: African political systems (Edited by M. Fortes and E. E. Evans-Pritchard), Published for the International African Institute by the Oxford University Press, London, 1940, pp. 272-296.
Keen Ian 2013, Structural functionalism, in: Theory in Social and Cultural Anthropology (Editors - McGee, Jon R., Warms, Richard L.), Texas State University, Sage Publications, pp. 819-824.
Nisbet R. 1969, Social Change and History. Aspects of the Western Theory of Development. New York: Oxford University Press, 335 p.
Radcliffe-Brown A. R. 1922, The Andaman Islanders. Cambridge University Press. 504 p. Online https://tile.loc.gov/storage-services/public/gdcmassbookdig/andamanislanders00radc/andamanislanders00radc.pdf.
Radcliffe-Brown A. R. 1923, The Methods of Ethnology and Social Anthropology // South African Journal of Science. 1923. Vol. XX, pp. 124-147. Online https://journals.co.za/doi/pdf/10.10520/AJA00382353_8523.
Radcliffe- Brown A.R. 1940, Preface in: African political systems (Edited by M. Fortes and E. E. Evans-Pritchard), Published for the International African Institute by the Oxford University Press, London, 1940, pp. I-XXIII.
Radcliffe-Brown A.R. 1964, A natural science of society. Glencoe: The Free Press & The Falcon's Wing Press, 156 p.